ծում, որ այդ խղճալի կինը իր կեանքում երբեք երջանկութեան քաղցրութիւնը չէր ճաշակել. բախտը երբեմն ժպտել էր նրան, միայն հրապուրելու համար, որ մի նոր, աւելի դառն դժբախտութեան մէջ ձգէ: Ոչ ոք նրան չէր մօտենում, ոչ ոքի հետ չէր խօսում նա: Այնպէս լուռ նստում էր թումբի վրայ, լսում էր գետակի մրմունջը, լսում էր ծառերի վրայ խօսող թռչունների ձայնը եւ խորին կերպով հոգոց էր հանում: Նրան մօտենում էին փողոցի երեխաները միայն: Երբ նա յայտնւում էր թումբի վրայ՝ «նենե՛ն, Նենենէ՛, ձայն էին տալիս երեխաները եւ, ամէն կողմից վազելով, շրջապատում էին նրան: Նենեն գրկում էր նրանց, խօսում էր նրանց հետ եւ բաժանում էր սեւ փողեր, որ տանեն իրանց համար ուտելու բան գնեն: Երեխաները համբուրում էին նրա ոսկրացած ձեռքերը, համբուրում էին նրա նիհար ցամաքած երեսը եւ ուրախութեան աղաղակներով հեռանում էին: Այդ դժբախտ կինը վշտացած, շա՛տ վշտացած էր հասակաւոր մարդիկներից եւ իր մխիթարութիւնը գտնում էր միայն անմեղ երեխաների մէջ...

Ո՞վ էր այդ Նենեն:

Նա մի ամբողջ պատմութիւն ունի, «Խաչագողի յիշատակարանի» մէջ մեր ընթերցողներին յայտնի է: Նա Մուրադի կինն էր: Այդ տունը Մուրադի տունն էր:

Մուրադը գործեց եւ լաւ գործեց, բայց իր բոլոր ընկերների մէջ նա միայն դժբախտ գտնոեցաւ: Զաւակներ չունեցաւ նա: Ազգականները նրա հարստութիւնը ժառանգելու համար՝ չսպասեցին նրա մահոանը, այլ շտապեցին վաղօրօք թունաւորել նրան: Նա մեռաւ, անմխիթար սուգի մէջ թողնելով Նենէին, որը չէր դադարում ողբալ սիրելի ամուսնու անմոռանալի յիշատակը:

Այդ թշոառ այրին բոլորովին միայնակ, բոլորովին անջատուած հասարակութիւնից, ապրում էր իր տանը թախծութեան մէջ: Նա զզուած էր կեանքից, զզուած էր եւ մարդիկներից: Նրան կենակցում էր մի զառամեալ ծերունի միայն, որի աչքերը այլեւս չէին տեսնում: Նրա կմախքն էր մնացել եւ մի ողորմելի ձայն, որ երբեմն հառաչում էր. «ա՛խ, ե՞րբ պէտք է մեռնեմե... Ամէն անգամ կարելի էր տեսնել նրան կծկուած բակի մի անկիւնում, մի կտոր փալասի վրայ, անդադար, տրտնջում էր՝ «քաղցած եմ»... Նէնէն ամբողջ օրը կերակրում էր նրան, բայց կշտացնելու հնար չէր լինում:

Ծերունին քաւոր Պետրոսն էր:

Երկար թափառումներից յետոյ, վերադառնալով իր հայրենիքը, այդ երեւելի խաչագողը գտաւ իր ամբողջ ընտանիքը ոչնչացած: Նենեն առեց